

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° ՀԽ-1

Նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

ք. Երևան

16 սեպտեմբերի 2016 թ., ժամը՝ 12.00

**Նիստի նախագահ՝**

Գաբրիել Ղազարյան

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար, նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ

**խորհրդի անդամներ՝**

Հարություն Յավոյան

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե

Հարություն Բաբայան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Խաչիկ Հարությունյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական ակումբ

Արսեն Գաբրիելյան

ՀՀ բազկամարտի ֆեդերացիա

Սամվել Սերոբյան

«Երևանի Վահան Զատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ

Գևորգ Սիմոնյան

«Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՕԱԿ

Էմին Երիցյան

Հայաստանի համայնքների միություն

Գագիկ Աղաջանյան

«Ապավեն» ՍՊԸ

Լիլիթ Մակարյան

Գյումրու երիտասարդական պալատ

Յուրի Ալեքսանյան

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե

Գոհար Նալբանդյան

«Մեդիամաքս» լրատվական գործակալություն

Արշամ Սարգսյան

«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ

## Օրակարգ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծում երիտասարդության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում համայնքների ղեկավարներին վերապահվող լիազորությունների մասին:
2. Համայնքներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար ռեսուրսների հաշվառման մասին:
3. Հայաստանի Հանրապետության մարզերի մարզադպրոցները գույքով ապահովելու և մարզական կյանքն ակտիվացնելու մասին:

### Օրակարգի 1-ին հարցի քննարկում

Հայաստանի համայնքների միության նախագահ Է. Երիցյանը ներկայացրեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծում երիտասարդության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում համայնքների ղեկավարներին վերապահվող լիազորություններին պարտադիր բնույթ տալու վերաբերյալ իր հիմնավորումները:

**Ելույթ ունեցան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրել Ղազարյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի բաժնի պետ Հարություն Յավրյանը:

**Որոշվեց՝** հարցին անդրադառնալ ««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի դրույթներն առավել մանրամասն ուսումնասիրելուց հետո:

### Օրակարգի 2-րդ հարցի քննարկում

Հայաստանի համայնքների միության նախագահ Է. Երիցյանը ներկայացրեց ՀՀ համայնքներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար ռեսուրսների հաշվառման անհրաժեշտության մասին դիտարկումները:

**Ելույթ ունեցան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրել Ղազարյանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ներկայացուցիչ Յուրի Ալեքսանյանը:

**Որոշվեց՝** տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

### Օրակարգի 3-րդ հարցի քննարկում

«Մեդիամաքս» լրատվական գործակալության լրագրող Գոհար Նալբանդյանը խոսեց ՀՀ մարզերի մարզադպրոցների գույքով ապահովելու և մարզական կյանքն ակտիվացնելու անհրաժեշտության մասին:

**Ելույթ ունեցան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրել Ղազարյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ Վարշամ Սարգսյանը, Գյումրու երիտասարդական պալատի ղեկավար Լիլիթ Մակարյանը:

**Որոշվեց՝** ՀՀ մարզերի մարզադպրոցները գույքով ապահովելու և մարզական կյանքն ակտիվացնելու նպատակով կատարված աշխատանքների, ինչպես նաև այդ ուղղությամբ անհրաժեշտ լրացուցիչ ուսումնասիրությունների և դրանց արդյունքների մասին տեղեկատվությունը տրամադրել հասարակական խորհրդի անդամներին՝ առաջարկությունների փաթեթ մշակելու նկատակով:

**Հասարակական խորհրդի նախագահ՝**



**Գ. Ղազարյան**